



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2077

2
696

947925
U-83

3772

Красный ♂ .

\$ 2004

280

696-ԱՐ

9(47.925)

76

Ա-83

ԳՈՒՄԻԱՆ

ար.

ԵՒ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀԱՅՈՑ

Ի ԿՈՍՏԱՆԴԻՆԻՊՈԼԻՒ



1866

2012

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Ե Կ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀԱՅՈՑ

Ի ԿՈՍՏԱՆԴՅՈՒՊՈԼԻՍ



Երբոր Կաթողիկոսական թանձնաժողովն իր Տեղեկագիրը տեսրակով ու Մասիս լրազրոյն միջոցաւ հրատարակեց, ստիպողական պարտաւորութիւն մը համարեցինք Դիտողութիւննիս զրել՝ ի սէր Հ. Հայոց կրօնական միութեան :

Այս Դիտողութիւնը իրեն շարժառիթն ու նպատակն ունէր, զորս համառօտիւ բացատրել կուգենք աստ:

Ա. Դիտողութեան շարժառիթ եղողն ուրիշ բան չէր՝ եթէ հչ՝ Տեղեկագրի պատասխանատութիւնն իր վրայ առնող Ընդհանուր ժողովոյն անդիքադաքական և խարխուղ վիճակը. որ նոյն իսկ Տեղեկագրովը կուգէր խմորել Լուսաւորչականաց Ընդհանութիւնն, ու մյսպէս ցոյց տալ քաղաքական աշխարհին, և ներկայացնել զայն մասնաւորապէս Ռուսիոյ կառավարութեան: Ասիկա Հայ ժողովուրդը ծաղրելու չափ անիրաւութիւն մըն էր. ուստի և ժխտելու արժանի:

Բ. Դիտողութիւնն ուրիշ նպատակ չունէր, ապա թէ հչ՝ զօրութեամբ իմաց տալ Ընդհանուր ժողովոյն՝ թէ խնդրոյն յատակագիծը չը պիտի պատասխանէ իր կառուցանելիք շէնքին, և թէ նորա տակն աւազուտ է . . . : Այս դիտաւորութեամբ, եթէ հչ՝ ազդեցութիւն՝ գննէ սմափ մը տալ նոյն ժողովոյն, որ անդիքադաքական երկրորդ քայլէն զգուշանայ, և բազմադարեայ Հայ ազգը՝ իբրև սպիտակամօրուք տղայ մը չը ներկայացնէ քաղաքական աշխարհին՝ մանաւանդ Ռուսիոյ առաջ, հաստատ զիտնալով որ Հայոց՝ մանաւանդ Ռուսիոյ

Հայոց ընդհանրութիւնն իրեն պէս չը մտածեր, իրեն պէս չը տրամաբաներ և իրեն պէս չնւզեր վարուիլ:

Ընդհանուր ժողովոյն այս կացութիւնը նշմարելով՝ Դիտողութեան հեղինակն իր ամենասրբազան պարտքը կատարեց, առանց մէկի ազգեցութեան, առանց մէկի դրդման, առանց մէկի թելաղրութեան և առանց մէկի զրիչը փոխ առնելու և իր անունը փոխ տալու:

Բայց Դիտողութիւնն իր նպատակին չը հասաւ. որովհետեւ Պօլսեցի Ընդհանուր ժողովը մայիս 29ի նիստին մէջ անոր տեսութեանցն ակնածութիւն ընելէն յետոյ՝ շնորհակալութեան քուէ ևս տուաւ. Տեղեկազրի Յանձնաժողովոյն. և Արամեանի Դիտողութիւնն այսպէս դատապարտելով՝ Հայոց կրօնական բազմադարեայ ուղղույն վրայ փուշեր ցանեց. Ազգի մեծմտութիւնը կազդուրեց և մէկ խօսքով՝ ներման և Թոյլտուութեան սկզբունքով սնած ժողովուրդ մը՝ նորածին կամ վեցամսեայ կաթոլիկական տարադէպ (absurde) իրաւասութեան մը հետ զանգելով՝ դէպ ի Հռովմ տանելու փորձն ըրաւ. չենք զիտեր ըրածը զիտնալով թէ ոչ, որոյ վերայ պիտի խօսինք ի վերջոյ:

Այս միջոցիս՝ լեզուանի Ծաղիկն ալ մեր զրատան դրսնէն ներս մտաւ և Հայ Տեղեկազրիր միայն Հայուն հետ խօսած համարելով՝ իր անուշահուու հեզնուութիւնները քթերնուս բուրեց ու վերջապէս Ռուս կը հոտիֆ ըսելով՝ իր սովորական սրամտութեամբ « Հայը հպատակութեան դպրոցին մէջ առաջին շողոմարար աշակերտն է » բաւաւ, ու ամենայն քաղաքավարութեամբ դուրս ելաւ :

Գիտէ Ծաղիկ, և քան զայլս լաւագոյն, թէ ինչպէս ամէն ծաղիկ՝ նոյնպէս ամէն խնդիր իրենց հոտերն ունին, բայց ժամանակն ալ պիտի ցոյց տայ, թէ սոտւզիւ և իրապէս ուսւս հոտողը՝ որն է, մայիս 24ի Դիտողութիւնն է ներկայիս մէջ՝ թէ 29ի նիստը ապառնույն մէջ: Եւ մեզի համար խնդրոյն մէջ, որ բնական է, աւելի լաւ է թարմ հոտիլ՝ քան թէ նոյնը ապառնույն մէջ՝ անբնական ու մզլած հոտիլ: Ծաղիկի թափանցուն իմացողութիւնը չը ներեր մեզ՝ այսչափէն աւելին խօսիլ:

Մեր խնդրոյն դառնալով՝ երբոր Ընդհանուր ժողովոյն վերանդիմադական երկրորդ քայլն առնուլը տեսանք՝ մեր անհատական պարագը զո՞նէ կատարած համարելով՝ լուս-թիւնը մեզի բաժին առնուլ ուզեցինք՝ երեք պատճառներով։

Նախ անոր համար՝ որ մեր վարչութեան տակ լրազիր չու-նենալով՝ չէինք կրնար առանց ուրիշին էջերը մուրալու, շարունակել մեր խնդիրը, և այն ալ՝ յօդուածն սպաննելու չափ զիշումներ ընելու պայմանաւ։

Երկրորդ՝ ժամանակ և դրամ վատնելու չափ առատութիւն պէտք էր ունենալ, որ զիշեր ատեն՝ ծառային ձեռքը չորեք-կերոնեայ լապտեր տուող և դռնէ դուռ անկուտի Տետրակ մուրացող տարօրինակ ժողովրդեան մըկարենայինք դիմանալ։

Երրորդ՝ ժամանակը և մանաւանդ խնդրոյն ելքը պիտի վճռէր հարկաւ, թէ որոն է իրաւունքը. Ընդհանուր ժողովոյ ընթացքին թէ Արամեանի Դիտողութեան։

Այս երեք օրինաւոր պատճառներով՝ երբոր լուսթիւնը (ինչպէս վերն ըստինք) մեզի բաժին առած կը համարէինք. յան-կարծ մայիսի Ծիլն Աւարայրին և անոր յաւելուած Տետրակը ձեռքերնիս անցաւ, որ՝ Դիտողութիւնը իբրև քննարանող՝ ուռած, փրած և հեւալով մեր վրայ կը յարձկէր։

Պապերնուս լսած էինք թէ, երբոր մարդու մը քառա-սուն օր շարունակ խենդ ըսես՝ խենդ ոսկը կ'աճի: Բայց չէինք լսած, թէ Հայուն ալ երրոր անզամ մը Տիրացու ըսես՝ տիրա-ցու ոսկը կաճի և ծիծուան պէս կը ճչէ։

Այսպէս, Ծիլ Արգոյ հեղինակը, որպէս թէ Տեղեկազրի ասա-ցուածքը (dictions) ինքը յօրինած ըլլայլեր և կացել, Փաստաբան է կանգներ Ընդհանուր ժողովոյն և մեր չըսածն ու մտքեր-նուս չանցածը մեր բերնին մէջ դնելով՝ խելքին եկածը դուրս է թափեր. մյնչափ որ՝ անհիմն հետևութիւնք և անտե-ղի հեզնութիւնք կը վխտանայդ Տիրացուական գրութեան մէջ։

Զարմանք, Ծիլն Արգոյ հեղինակը, որ ժամանակէ մ'ի վեր մանզաղ ի ձեռին՝ կաթողիկոսներ, Արքեպիսկոպոսներ, Եպի-կոպոսներ, Վարդապետներ և վերջապէս Կաթողիկոսութեան

նշոյլ մը տուող անձանց ամէնն ալ չարդուբուրդ ընելով գետնի վրայ կը փռէ, պահ մը կը հեւայ, և դարձեալ կ'սկըսի հարուած հարուածքի վրայ տալով՝ վրէժխնդրութեան շունչ առնուլ տալ :

Այդ Անձը կըսենք, որուն տարօինակ ընթացքը մինչև ցարդ տեսնելով՝ իր կարծիքն ինչ որ է՝ կը յարգենք. իրեն ազատութիւնը՝ ինչ սկզբան վրայ որ հիմնեալ է՝ կը պատուենք, ելեր այսօր ալ զրականութեան ազատ ասպարէզը մենավաճառէլ կուզէ, և անոր սպարապետը ձևանալով մեր բերնին կղպանք դնելու ճգոյն չը բաւականանար ու մեր զրիչն ու կարծիքն ալ յափշտակել կը չանայ, և կարծեցնել կուզէ միանգաման՝ թէ ան ինչ ազդեցութեամբ զրած ենք մեր Դիտողութիւնը : Ինչ ենթադրութիւն . . . Բայց ինչ յանդգնութիւն :

Թող ներէ Արգոյ Ծիլն, ասել իրեն, թէ այդ, մյնափիսի անուղղաղատութեան նշան(սեփրօմ մընէ, որով բուն խնդիրը շղել ուզողներն ու քննաբանութեան կարգն ու կանոնը չզիտցողները միայն կուզեն զինուիլ: Եւ թէ Դիտողութեան հեղինակն իրմէ այնչափ Հայասիրութեան, Հոգեկան անկախութեան, Կրօնական ազատութեան և Քաղաքական տեսութեան դասեր կսպասէ, որչափ որ ծեղավաճառէ մը (droguiste) մետաքսեայ բնհեղներ :

Եւ որովհետև Ծիլն Արգոյ հեղինակը Դիտողութեան խնդիրը չը հասկնալով Փաստաբան է կանգներ Ընդհանուր ժողովոյն կողմանէ, և փոխանակ զմեզ ըմբերանելու լեզունիս կարձակէ, խօսինք :

Ուստի մեզ համար ճառած ամէն անտեղի տրամաբանութիւններն ու Պօլսեցի Հայոց մեծմտութիւնը կազդուրող շօշափելի և զզայուն շողորորթութիւններն առ ոչինչ համարելով՝ իրեն վերջի տողերուն քանի մը կէտերովը բաւականանանք: Բայց տեսնենք նախ՝ թէ Ընդհանուր ժողովը Տեղեկագրի փոսին մէջ ձգող անձը պիտի կարենայ զմեզ ապշեցնելու չափ հնարքով մը անկէ դուրս հանել: Ակսինք,

Ինչ՝ ըսել է Տեղեկագիր .

Եթէ հայերէն բառը կը հասկընանք . Գրուածք մը՝ որուն պաշտօնն է մի միայն տեղեկութիւն տալ : Ուրեմն դորա պաշտօնը իրական կացութեանը վրայ մանրամասն տեղեկութիւն առնուլն ու անոր վրայ ճիշդ նկարազրութիւն ընելն է . և այս նկարազրութիւնը շարադրողին պաշտօնն է , ոչ միայն անոր մէջ այնպիսի բառեր ըսապրդել , որ խնդիրը չայլայլի , այլ և նորա սրբազան պարտքն է զօրութեամբ հասկըցուելու նշանակութիւն ունեցող բառերէն անզամ զգուշանալ , որպէս զի խնդիրը պարզի և երկդիմութեան չ'ենթարկուի :

Այս է տեղեկազրի նշակութիւնը և պաշտօնը , զոր ուրիշ կերպ չեն հասկնար ամէն բաղաքագէտ , գուցէ և անքաղաքագէտ անձինք անզամ :

Դառնանք այժմ Պօլսեցի Ընդհանուր ժողովոյն շնորհակալութիւն քուէած Տեղեկազրոյն , և տեսնենք թէ իր ներհուն անձանց կնքահայրութեամբը մկրտուած անուանն ու պաշտօնին արժանի է . և ինչ լ'զու կը զործածէ :

Դարձնենք թերթերը :

Ռուսի կառավարութեան կողմանէ տրուած Պալաժէնիա անուն կանոնադրութիւնը , կանուանէ ,

Անկախութեան և ազատութեան սպառնացող :

Բարեկարգութեան աղաւաղիչ :

Եկեղեցւոյ ազատ իրաւանց հակառակ .

Եւ անոր մէջ կը նշմարէ .

Առաջին ապօրինաւորութիւն :

Երկրորդ անտեղութիւն :

Չորրորդ ապօրինաւորութիւն :

Հինգերորդ ապօրինաւորութիւն :

Վեցերորդ և ծայրազոյն ապօրինաւորութիւն , ևայլն , ևայլն ,

Մնացեալներն ալ այսպէս :

Այս է Տեղեկագիր անուանածնին և նորա զործածած լեզուն :

Իբր Հայ . կը փափաքէնք որ այդ տարօրինակ զրութիւնն

այդ յանդուզն լեզուաւ աշխարհի առաջ չելնէր, որովհետև ազգ մը չկայ երկրագնտիս վրայ, որ ատոր, և ատով ալ Հայոց վրայ չը ծիծաղի : Իսկ եթէ դա, ընդհակառակն, միայն Հայոց մէջ մնալու համար այդ անունն առած էր, առ ուրիշ խօսք :

Բայց ինչո՞ւ ուրեմն այդ զրութիւնը Հայոց ներքին շրջանէն գուրս հանուեցաւ . . . Մի թէ այդ խորհուրդն ալ ներհուն անձանց կողմանէ տրուած էր, և ատոր համար 29ի Նիստը շնորհակալութիւն քուէնց . . . Բայց այդ Տեղեկագրի չը նմանիր, այլ Դատագրի . բանզի տեղեկուրիւն չը տար, այլ կը դատէ :

Տեսնենք ուրեմն սա Տեղեկագրի անուն դատաւորն ու նորա Փաստաբանը, թէ ինչ ինչ կը պահանջնեն Ռուսաց կառավարութենէն :

Անկախութիւն .

Եւ ինչի, Եկեղեցական, Յարաբերական և Հայրապետական: Բայց ասոնց ամենն ալ, կարծեօք, (կրօնագիտական ուսման իբրև անհմուտ խօսելով) մեր Եկեղեցին ունէր ի սկզբանէ և ունի այժմ, և եթէ խնդիրը մեր հասկցածին պէս է, Եկեղեցական և այլն անկախութիւնը՝ Ազգի մը քրիստոնէական Հաւատքին, Վարդապետութեանց, Ծէսերուն, Արարողութեանցն ու Աւանդութեանցը մէջ և անոնց վրայ միայն կը կայանայ, ուստի և անոնց վրայ կը հիմնուի նաև նոյն Ազգին, և Եկեղեցւոյն կրօնական Վարչութիւնը:

Այս տեսակ անկախութիւն մը մեր Եկեղեցիէն եթէ յափշտակուած է Թող հաւատացուի, որ մեր ուժին ու կարողութեանը ներածին չափ պիտի մաքառինք . բայց այդպիսի յափշտակութիւն չենք տեսներ : Հետևաբար կամ չը հասկնալո՞՛ թէ ինչ ըսել է Եկեղեցական անկախութիւն ; Ելեր ունեցածնին չունեցածի պէս պահանջել կուզեն, կամ ինչ ուզելնին չեն զիտեր, Եւ կամ անկախութիւն ըսելով ուրիշ բան չեն ուզեր հասկնալ, բայց միայն ազատութիւն, և ուզածնին պիտի ըլլայ հարկաւ, Եկեղեցական ազատութիւն՝ յարաբերականին ու հայրապետականին հետ . . . Տարօրինակ և անհինելի պահանջում :

ինչ։ կառավարութենէ մ'այս նշանակութեամբ եկեղեցական անկախութիւն . . . Զենք հասկնար. Ամօթ չէ եա : Ասոր բացատրութիւնը մեր բառարաններուն մէջ Տեղեկալրի և նորա Փաստարան Էֆէնտիյին հասկցածին պէս չզտանք: Կրօնական ազատութիւնը, կը հասկնանք, բայց եկեղեցականը, ոչ. վասն զի այդպիսի եկեղեցի չենք տեսած ոչ Քրիստոնէից, ոչ Այլազգեաց, ոչ Պիրմացւոց, և ոչ իսկ Ճարօնցւոց մէջ, որուն կայսրը թէն քահանայ՝ բայց և այնպէս եկեղեցին քաղաքական տեսչութեանը ենթարկուած է :

Իրաւ է որ եկեղեցական անկախութիւնն, ազատական նշանակութեամբ իր դարերն ունեցաւ, որ կրօնքի ազդեցութեան առաւելութեամբ (prépondérance) կրօնական աշխարհը կառավարեց ու թագեր բաժնելու չափ գօրացաւ. բայց կրօնական ազատութիւնն անոր ընդդէմ մաքառելով թնդանօթներ որոտացուց և արիւն սպառելով նուանեց այն կոստանդինական և կարալրասականսկզբունքը, որ կրօնական հոսանք մը ձևանալով՝ աշխարհը խոխափէս առջին ձգած ուզած տեղը կը տանէր:

Ուստի և այն սկզբունքը քաղաքականի փոխուելով անոր ուժովը և գօրութեամբը հոսանք մը ձևացաւ, և Հայը չը կրնար անոր ուժգին ընթացիցը դէմ կրօնական ուժով մաքառիլ կամ լաւ ևս ըսելով՝ չը կրնար այն սրընթաց հոսանքին դէմ զլուխ տնկել և լողալ:

Տեղեկազրի հասկցած եկեղեցական անկախութիւնն այնպիսի հակառակ առարկայ մըն է այսօր քաղաքականին, որոյ հաստատութեան համար առանց երկինքներն ելնելու կարող ենք բիւր վկայութիւն բերել, և ահա Պապերուն (Եկեղեցական աշխարհին մէջ ամենէն զօրաւոր զեկավարներուն) զանգատներն ու բողոքները յայսմ մասին, որ կենդանի և բարբառող վկաներ կրնան համարուիլ մեր խնդրոյն:

Ասոր պատճառները միջին դարուն պատմութենէն կը բացատրուին, որ եթէ կամք ընէ Ընդհանուր ժողովը, թող դարձնէ անոր թերթերը և տեսնէ թէ որչափ ապատամբական զաղտնի դարսաններ լարելու և որչափ դաւաճանութիւններ

կազմելու բոյն եղած է այդ եկեղեցական անկախութիւնն , որոյ փիլոնին տակ այսպիսի դէպքեր գրեթէ մրջման պէս կը վիստան :

Այս կացութիւնն էր՝ որ կառավարութիւնները արթնցուց և ստիպեց զանոնք՝ կրօնական պատրուակաւ հինուած դաւանանութեանց առաջքն առնուլ , որ ամէն վանքի , կը- րօնական դպրոցներու և եկեղեցեաց ատեաններու մօտ՝ իրենց դէտերը կանգնեցուցին և իրենց այս տեսակ վկրօներով՝ կրօնական հին աշխարհը քաղաքական նոր աշխարհին փոխեցին : Եւ այս սկզբունքը որ բոլոր կառավարութիւնը ընդունեցին , այնչափ ամուր , այնչափ պինտ և այնչափ ուժով բըռ- նած են այժմ , որ իրենցինէն աւելի որոտացող թնդանօթներէն ուրիշ բաննվ մը կարելի չէ խլել :

Ինչու հեռին երթանք , ֆրանսայի և ուրիշ Եւրոպական Տէրութեանց մէջ , երբոր կղերը կրօնական պատրուակաւ եկեղեցւոյ ատենին վրայ քաղաքական խնդիրներ յօշել կուզէ , կառավարութիւնք իսկոյն անոր բերանը կը փակեն , և երբեմն եկեղեցւոյ ատեանը կը մերժեն : Հարկ չկայ ըսել թէ մեք իսկ ականատես եղած ենք բանիցս անզամ այսպիսի դէպքի , որ Փարիզի մէջ պատահած են :

Ուստի կնմ Տեղեկազրի ներհնուն անձանց պէս հասկնալով եկեղեցական անկախութիւնը աշխարհիս վրայ չարաչար ճըն- շուած պիտի սեպենք , և հետևաբար ամենէն լուսաւորեալ կառավարութիւնները բարբարոս ու եկեղեցւոյ հալածիչ պիտի համարինք , և կամ մեր հասկցած նշանակութեամբ՝ եկեղեցա- կան անկախութիւնն իր շրջանի մէջ պիտի սահմանափակենք :

Եւ այն ատեն , իրաւունք պիտի ունենանք ըսելու , թէ Տե- ղեկազիրը , նորա համար շնորհակալութիւն քուէող Ընդհա- նուր ժողովը , շողոքորդուած Պօլսեցի Հայը և Պ. Ծիլն իսկ՝ ինչ ուզելնին չեն զիտեր . և բուն իսկ այս խնդիրէն կը բղխին ամէն տարօրինակ և անյաջողելի պահանջմունք :

Եթէ օրինակով ալ հաստատել ուզենք , հարկ չը մնար Փարսկաստանի և Հնդկաստանի հայոց հարցնելու : Ահաւա-

սիկ մեր քթին տակի Սահմանադրութիւնը (որոյվրայ Միջն այն-
չափ կը պարծի) : Տեսնենք թէ նրափիսի անկախութիւն կը
պարունակէ այդ, որ միմիայն կրօնական է, և քաղաքական
եօդա մը չունի իր մէջ: Տեսնենք ատոր հետ դարձեալ, Պօլսոյ
պատրիարքարանին և նորայ եկեղեցւոյն վիճակը, թէ ինչ
տեսակ անկախութիւն ունի, և կը պատասխանէ մեզի առա-
ջարկուած անկախութեան :

Ամէն մարդ զիստէ, թէ ժամանակին, Սահմանադրութեան
Յանձնաժողովոյ Անդամք նրչափ աշխատեցան արտօնութիւն
առնելու Ընդհանուր ժողովոյն համար, որ առանց կառա-
վարութեան հրամանի կարող ըլլայ հաւաքուելու և իր նիս-
տերն ընելու: Յաջողեցան այդ արտօնութիւնն ստանալու, ոչ:

Ինչո՞ւ համար. միթէ Սահմանադրութեան ամէն մէկ յօդ-
ուածներն ուշի ուշով սրբազրուած, ու այնպէս ջնորհուած
չէր Հայոց ազգին. և միթէ նոյն ժողովոյն նախազահողը
միանգամայն և կրօնականին նախազահող Գերունակ իշխանը
չը պիտի ըլլար:

Այն, բայց այլ են կրօնականին և այլ քաղաքականին պա-
հանջմունքը: Տեղական կառավարութեան իրաւունքը կը
պահանջէ ամէն բան իմանալ և անոնց վրայ հսկելու հարկ
եղած ատենն ալ դէտեր և երբեմն (ինչպէս պատահած է)՝
պրօկուրօնէր ղրկել ու մէկ խօսքով՝ Ընդհանուր ժողովն իր
Նախազահովը քաղաքական տեսչութեան տակ ձգելով վերօյել
զնա. որպէս զի կրօնական պատրուակաւ եկեղեցւոյ մէջ դէպք
մը չը լդի, չուռի և չը պայթի:

Ըսել է որ Տաճկաստանի Պատրիարքական եկեղեցին ալ
իր Սահմանադրութեամբը առկախ է եղեր Տեղական կառա-
վարութենէն: Այնպէս որ, զերեզմանատան մը մատուան մէջ
անգամ պատարագ չը մատուցուիր, որովհետև մատուոը օծ-
եալ չէ և կառավարութիւնը հրաման չունի օծելու ... Կրնանք
ասոնց համարզանզատիլ Թուրքիոյ կառավարութենէ: Կրնանք
մեր եկեղեցւոյ անկախութիւնը բռնաբարուած համարիլ. Եւ
կրնանք Պոսփորի եզրքը գոռացնող շնորհակալութեանց ձայ-

ներն ու լեռներ դղրտացնող բիւր կեցցէներուն բոնբիւնքը ուրանալ. քաւ լիցի :

Ապա ուրեմն ինչ է Ընդհանուր ժողովոյ Փաստաբանին երևակայած անկախութիւնը, որ Ռուսիոյ կառավարութենէ կը պահանջէ, անուանելով նոյն կառավարութիւնն իբրև Հայոց Եկեղեցւոյ անկախութիւնը շնչել կամեցող Տերութիւն, և զմեզ նորա բաղաբանութիւնը պաշտպանող դէս :

Այս տեղ քիչ մը կանգ առնունք : Մեր կարծեօքը, Հայ ըլլալու համար երկու յատկութիւն կը պահանջուէր Պ. Փաստաբանի կողմանէ . այն է, Կաթողիկոսական խնդրոյն վրայ քաջ տեղեկութիւն ունենալով Պալամէնեան մերժել, և Թիֆլիզի (թէ և աղաւաղեալ) լեզուաւ խօսիլ ու զրել. Բայց երևի թէ երրորդ յատկութիւն մըն ալ կայ, որ կը պահանջուի . այն է, հայնոյել Ռուսիոյ կառավարութիւնը :

Եթէ Ռուսաց կառավարութիւնը չը հայնոյողը Հայ չէ, աւելի լաւ կը համարինք ընդունիլ Պ. Փաստաբանի զրաբարտութիւնն ու մինչև անգամ օօգաֆ կանչուիլ, քան թէ այդ դիմօք աշխարհի առաջ ներկայանալ:

Բայց մեր խնդրոյն դառնալով կը խնդրենք, որ շնորհք ընէ Պ. Փաստաբանը և մեզի հետ երկու քայլիկ՝ տան տիս ընելով՝ քաղաքականութեան զոնէ առաջի աստիճանին վրայ կոխսէ. և տեսնէ թէ բուն Ռուսաց Եկեղեցին կրնայ պահանջել իր կրօնակից կառավարութենէն այդ անկախութիւնը, զոր ինք այսօր Հայոց համար կը պահանջէ :

Ինչ է ուրեմն իր պահանջածը. վերացեալ անկախութիւն, որուն համար Ս. Պապն իր անսիրիին միջնորդութեամբ ամէն քաղաքական նկատումներն ու ընթացքը դատապարտեց ու դարձեալ չյաջողեցաւ: Շատ աղէկ եթէ Պ. Փաստաբանը վառօդ ու սիւին ունի մեզ ալ զինւոր Թող զրէ . . . Ապահով կրնայ ըլլալ որ իր երեսը սև չենք հաներ, յայնիմ մասին, որովհետեւ, մինչդեռ նա Ռուսաստանի մէջ իր այս աւուր բռնակալ անուանած Վեհապետին կենացը համար բաժակ կդրնչէր (trinquer) (մեք աշխարհի ազատութեան օրօրոցին մէջ

Ընդհանուր մարդկային սեռի ազատութեան համար կը տըրնէինք : Օն ի զէն ուրեմն . . . Ապա թէ ոչ՝ մի պարծանք , մի հեզնութիւն , և մի զրպարտութիւն և (en bon français, pas de gasconade) , վասն զի Դիտողութեան նպատակը Ծլինէն այնչափ կը տարբերի , որչափ որ հոգեկան անկախութիւնը վարչականէն . վասն զի մենք քշնամանք և կասգօնաբանութիւն մտիկ ընելու համար չը զրեցինք զայն :

Ընդհանուր ժողովոյն կողմանէ , Տեղեկազրին ու նորա Արգոյ Փաստաբանին ուզածները շատ են . բայց մեք անոնց ամենը Յարաբերական և Հայրապետական անկախութեանց մէջ պարունակելով , պիտի քննենք թէ անոնք ալ բաղաբական փօշիսէն և կամ վախցուած Պապականութեան և Ռուսականութեան բռնաբարութենէ զերծ կրնան մնալ : Տեսնենք .

Եջմիածնայ կամողիկոսութիւնը , իբրև կրօնական գերագոյն իշխանութիւն , բարոյական յարաբերութիւն ունի , զանազան Ցէրութեանց հապատակող քանի մի միլիօն Հայ ժողովրդեան հետ : Այս գերազան իշխանութեան յարաբերութիւնը բռնաբարուած է (լստ Տեղեկազրի) Պալամէնեան անուն կարգադրութեան մը զօրութեամբ , որ տրուած է 1836ին Ռուսաց Կայսեր կողմանէ և որ այսօր վերաբննութեան կը կարօտի :

Մեք ալ իբրև Եջմիածնական Հայ , չըսինք և չենք ըսեր , որ այդ Պալամէնեան չը վերաբննուի . ընդ հակառակն կը փափարինք ի բոլոր սրտէ , որ ոչ միայն վերաբննուի , այլ եթէ կարելի է , տանկի սրբազրութեան ոճով՝ վերէն ի վար մեղրամօմը թաթխուի :

Բայց ինչ պիտի դրուի ատոր տեղ , և որպիսի յօդուածներով պիտի փոխարինուի այդ :

Եջմիածնայ և անոր ազդեցութեան ներքև գտնուող վանուց ելքն ու մուտքը այնպիսի վարչութեան մը տակ ձգուի , որ կառավարութենէն անզամ անկամ ըլլայ :

Առկէ ապստամբութիւն կը գուշակուի , և քրիստոնէ կա-

ռավարութիւն մը չկայ աշխարհիս մէջ, որ ուզէ այնպիսի արտօնութիւն մը տալ, որով ժողովուրդն իրաւունք ունենայ ապստամբելու:

Կաթողիկոսին յարաբերութիւններն ազատ ու անկախ վիճակի մէջ պիտի ձգուին:

Ատի Ռուսութիւն է:

Կաթողիկոսին իրաւասութիւնը կամ Հայրապետական անկախութիւնը, ազատ և ինքնիշխան վիճակի մէջ պիտի ձգուի:

Ատի Կաթողիկութիւն է:

Ազատ յարաբերութիւն ըսելով այն կը հասկընանք, որ Կաթողիկոսը առանձին և անկախ թղթակցութիւն կունենայ ամեն Տէրութեանց ներքև գտնուող Հայ ժողովրդեան հետ. և այս միջոցով Հայ ժողովուրդը բարոյապէս իրեն կը հպատակեցնէ, և այս հպատակութենէն առաջ կուզայ այն անուղղակի հպատակութիւնը, որ Կաթողիկոսի հպատակութեամբ կը ոռւսանայ...

Ով եղաւ հիմա Ռուսը և նորա բաղաքականութիւնը պաշտպանողը:

Հայրապետական անկախութիւն ըսելով ալ այն կը հասկնանք որ Ազգին մէջ էջմիածինէն ուրիշ Հայրապետութիւններ չըլլան, և եթէ եղածներ ալ կան իրը ապստամբ Գերազահին նշուին, կամ իրենց աթոռներէն իջնալով՝ իրքն առաջնորդ հպատակին իրենց գերազոյն Իշխանին: Այն ատեն կը հարկաւորի, որ ամեն երկրի մէջ կրօնական ժողովներ կազմուին և այն ժողովները գերազահ Հայրապետէն վաւերանան և այն, և այլն: Ասոր կը ան աստուածապետութիւն (théogracie), որ ըսել է, ժողովուրդը հպատակեցնել քահանային, քահանայն վարդապետին. վարնապետը եպիսկոպոսին, եպիսկոպոսը ժողովի նախագահին, ժողովի նախագահը Ս. սինողին, Սուրբ սինողը Հայրապետին, Հայրապետն ալ (հայտէ խաթէր համար Ռուսին չըսենք) Աստուծոյ:

Ասի գէշ բան չէ. բայց Կաթողիկութիւն է:

Կաթողիկութիւն ըսելով մտքերնիս այն կրօնքը պախարակել չէ (ինչպէս ոմանք կարծեր են) այլ Տեղեկագրի աններելի

համամտութիւնը նշմարել յայնմ մասին, որ Հայոց եկեղեցւոյ և ժողովրդեան պարծանաց արժանի սկզբունքը վանելուզելով՝ այս օրերս երեան ելած իրաւասութեան խնդրոյն ակամայ գործիք եղած է. որով կղերին ու ժողովրդեան մէջ վիճ մը բանալ կը ապառնայ, և կղերն ու ժողովուրդը երկու տարբեր մարմիններու բաժնելով՝ կուզէ մէկն երկինքի մէջ և միւսը երկրի վրայ զետեղել :

Բայց կը զարմանանք թէ ինչո՞ւ համար Հայերը կը նեղանան երբոր իրենց երեսն ի վեր ինչ ըլլանին կը սենք: Ինչ կայ այդ Կաթոլիկութեան մէջ, որ ի ներքուտ կը նդունին, բայց յարտաքուստ ամօթ կը համարին այդ անունը վրանին առնելու: Մեր աչքին առաջ այդ ընթացքը պարզութիւն չունի, և զարմանալի կը թուի մեզ՝ որ Յ. Վ. Գաթը ըրճեանի զրքին դէմ չը բողոքող կղերը Կաթոլիկ կոչուիլ չուզէ. և առաւել ևս կը զարմացնէ մեզ Երուսաղիմայ վանքէն դուրս ելած Սիօն անուն ամսատետրին համամտութիւնը վերոյիշեալ զրքին վը-րայ, որ իր 6^{րդ} թուոյն մէջ կըսէ.

. . . . Յովսէփ (Գաթը ըրճեան) Վարդապետը ծանօթ է ազ-զիս իւր զրաւոր երկարասիրութիւններովը, մանաւանդ ան-ցեալները հրատարակած Հիմնական Տարբերութիւնն Կարողիկ եւ իշմիածնական դաւանութեանց անուն զրքովը. եայլն:

Ապա ուրեմն ինչ ըլլալ կուզեն երբոր կաթոլիկի նամբաներ կը բանան ու վրայէն չեն ուզեր անցնիլ, կընայ մարդս առանց զարմանալու կարդալ ասոնք, նոյնպէս և Տեղեկազրի պահանջմունքն ու նորա Փաստաբանին զրած տողերը. որ կըսէ,

. . . . Այս քաջ իմացէք Պ., Արամեան, և ձեր նետ միասին մեզ նմաններն ու Ռուսաց կառավարութիւնն էլ թող իմա-նայ, թէ Հայոց ազգն իր բարոյական անկախութիւնն ազա-տելով. . . . ժառանգ է թողած մեզ: Բայց այսոր Պապակա-նութիւնը մի կողմէն, Ռուսութիւն միա կողմէն բռնաբարում են այդ և քանդելու են աշխատում, եայլն:

Ապա ուրեմն ինչո՞ւ մեր զիտցածէն աւելի Հայրապետա-

կան անկախութիւն Ռուսաստան բնակող կաթողիկոսին . Ինչու մեր զիտցածէն աւելի իրաւասութիւն՝ օր ըստ օրէ կաթոլիկ խմորուող կղերին . և ինչու անաանձ ազատութիւն . . .

Այս խնդիրը տարբեր գոյն պարունակող ներկամաններու կը նմանի , որոց մէջ անդադար կը սուզէ Ծինն իր ձեռքի ճերմակ կտաւը և այն ուրիշ մտօք չէ բայց միայն անոր ճերմակութիւնը չփրանցնելու համար . . . Տարօրինակ ձեռնարկութիւն :

Բայց մեք այսպիսեաց պատասխան տալու համար զրեցինք մեր Դիտողութիւնը , որ մեր ծովացեալ մեղաց պատճառաւ կը դատապարտուինք դարձեալ մեր զործը ձգել և մաքառիլ հին ու լիկած սկզբունքի մը դէմ , հարցնելով թէ՝


Ազգ մը , որ ներողութեան սննդով մեծացած է , որ այն սկզբունքով և անոր մէջ միայն կուզէ զարգանալ , նորա զլիսին մէջ աստուածակետական խնդիրներ լեցնելէն ու միանգամայն հին զծեն չը պիտի շղիս , ըսելէն ինչ օգուտ կելնէ : Այն Ազգը և նորա եկեղեցին , որ իր վարդապետութեամբը կըշռել սովորած է իր կրօնքը , Ռուսի կառավարութեան դէմ զայրացնելու մտօք , անոր չը ճանչած ու չընդունած գերազութեան խնդիրը հինելէն ինչ բարութիւն առաջ կուզայ:

Ինչպէս , ուրեմն , պիտի կարենաք , այդ ժողովուրդը Եջմիածինէն ի Սիս փոխադրել , որով միայն կուզէք Ռուսի կառավարութեան սպառնալ : Կարող պիտի ըլլաք ժողովրդեան զլիսին մէջէն այս աւուր դրած անդինայիկական սկզբունքնիդ հանելու , և ուզած ատեննիդ պիտի կարենաք այդ սկզբմամբ շաղեալ Հայն ետևնուդ տանել . որ արդէն զերազոյութեան մը (ի շնորհս Ընդհանուր ժողովոյ) յարեալ՝ պիտի բողոքէ և չը պիտի ուզէ Ռուսաստանի Հայերէն զատուիլ : Աս ինչ տեսակ անդիուստութիւն և ինչտեսակ անդիկաթոլիկութիւն է : Երանի թէ չը հասկըցողը միայն մեք ըլլայինք . . .

Բայց Տեղեկագրի Աերիուն անձինքն ալ այս ճամբան են բռնած , և երևի թէ ասոնց սրբազրած պալամէնեային դէմ մեք ալ պիտի ստիպուինք բողոքելու , և այն ատեն բան ունի

Թուսը հետերնիս . . . Կովկասու Փոխարքայն հեմեն Թող
աշխատի, և եթէ բան զործ չունի, տարին տասներկու ամիս
Պաշաճէնեա Թող հասցնէ մեզի :

Բայց շիտակն ըսելով՝ բաւական պինտերես ըլլալու են Հա-
յերը, որ իրենց Եկեղեցւոյ անկախութիւնը ջնջել կամեցող Տե-
րութեան մը ելնեն ու նոյն եկեղեցւու առաջանքներ պա-
հանջելու յանդգնին . . .



Տեղեկագրոյն խնդիրն ու անդամանութիւնները : Թող
ուրեմն շնորհը ընէ, շնորհակարգութիւնը բաւով Ընդհանուր
ժողովն ու դիտէ ուշի ուշով և մասած թէ 1828էն մինչև 1836
ինչ կրնայ ըլլալ Եջմիածնայ վիճակը . ինչո՞ւ համար Պալաճէն-
եայի կարօտութիւն ունեցաւ այն ատենի կացութիւնը . և թէ
ինչ խորհրդով թելադրուեցաւ կառավարութիւնն այն կար-
գադրութիւնն ընելու :

Եթէ մեր անիշխանութեան պատմութիւնը դիտողութեան
տակ ձգենք, մանրամասն քննութեան կարօտութիւնն չը մնար.
համառօտագոյն տեսութիւնն մ'անգամ կարող է զմեզ համոզել
թէ մեր բաղաքական անիշխանութեան վիճակը ուղղակի ազ-
դեցութիւն ունէք մեր կրօնականին վրայ, և հետեւաբար ամէն
բան անկարգութեան մէջ էր ամէն տեղ:

Այս վշտալի և կիսավայրենի կացութիւնն ապացուցանելու
համար դարեր և տարիներ մաղելու հարկ չկայ: Երեկուայ և
այսօրուայ կացութիւններն ակներեւ կեցած են մեր առաջ:

Տանկաստանի մէջ Երուսաղիմայ և ուրիշ տեղերու վանուց,
գաւառաց և առաջնորդական թեմերուն արդի վիճակն՝ եթէ
ստուգիւ կարգի և կանոնի կը կարօտին այսօր, հաւատալու
է որ Եջմիածինն ալ իր վանքերովն ու ժողովրդովը սոյն խակ
ստորոգութեան մէջ էր: Մեր կարծիքն այն է որ Պալա-
ճէնեան այն ատենի անկարգութեանց առաջըն առնելու հա-
մար ամենակարենոր պիտոյք մըն էր, որ Հայերը խնդրեցին՝
կառավարութիւնն ալ տուաւ . բայց եթէ Հայերն ալ չխընդ-

թէին՝ կրնար Էջմիածին բարեկարգ կառավարութեան մը
առաջ անքարեկարգ և հիստ վիճակի մէջ մնալ, և ինչ առա-
ւելութիւն կունենար այժմեան վիճակէն :

Երբոր Էջմիածնայ վանուց միաբանութեան վրայով վերջի
տարիներուս հրատարակուածները, նոյնպէս և Ներսէս Կաթո-
ղիկոսին առ Փոխարքայն զրուած նամակը կը կարդանք,
անոնց մէջ աններելի անկարգութիւններէն ուրիշ բան չենք
տեսներ, և այս վիճակը կը վկայէ որ եթէ Պալամէնեայի ներ-
քե այնչափ անկարգութիւններ եղած են և կը լինին մինչև
ցարդ, ուրեմն 1856ի Պալամէնեային ստիպողական կարօտու-
թիւն կար, և հետևաբար եթէ կառավարութիւնը կարգ կանոն
դրած ըլլար, այժմեայ անկարգութիւններէն առաւել ես, և մեր
կրօնքին պատիւ չըերելու չափ անսանձ անկարգութիւններ
հարկաւ պիտի լսէինք Էջմիածինէն և տեսնէինք այսօր, ինչ
որ Սիսի և Աղթամարայ Աթոռներուն վրայ կը տեսնենք :

Ըսել է որ Ռուսաց կառավարութիւնը Հայոց գէշութիւն
ընելու համար չէ տուեր Պալամէնեան, ինչպէս որ Ընդհանուր
ժողովը կարծել և իր քուէին ու Պ. Փաստաբանին միջնորդու-
թեամբը կարծեցնել կուզէ :

Մեր չենք կարծէր և չենք ուզեր հաւատալ Ոէ Ռուսաց կա-
ռավարութիւնը զալտնի նպատակ մը ունեցած ըլլայ այդ Պա-
լամէնեային մէջ, որովհետև ով կրնար բռնաբարել զինքը Պա-
լամէնեան տալու եթէ նա չը կամենար տալ, և առ ինչ տեսակ
տրամաբանութիւնէ կառավարութեան մը դէմ. միթէ Ռու-
սաց կառավարութիւնը չէր կրնար, եթէ ուզեր, ենթադրեալ
նպատակին ուրիշ համբով հասնիլ. և ինչ հարկ կար անկարգ
վիճակին շոգեկառքը մէկդի ձգել ու պալամէնեայով Արմաշու-
գանուց կառքը մտնել իր նպատակին հասնելու համար, և միթէ
Պալամէնեան հիներու հարկ կը մնար այն ատեն և աւելի լաւ
ու դիւրին չէր կարգ ու կանոն չունեցող վանքի մը եպիսկոպո-
ներուն տիրել քան Պալամէնեայով կարգադրեալ վանքի : Ոչ,
ատոնց բոլորն ալ ծաղրելի ենթադրութիւններ են և չենք ու-
զեր ոչ համոզուիլ ոչ հաւատալ և ոչ վիճել՝ քանի որ այն

կառավարութեան ահազնութիւնն ու մեր փոքրկութիւնն առաջնիս առնելով երկուքն ալ կը դիտենք :

Ուրիմն խծբութիւնները և անհիմն ենթադրութիւնները մէկդի ձգելով հաւատալու է որ Ռուսաց կառավարութեան քաղաքականութիւնը յայսմ մասին, քանի որ մ.ս.յ. Ա.Թոռ Հայոց կը ճանաչէ Էջմիածնայ Աթոռը՝ աւելի նպաստաւոր ընթացք մը բռնած է Հայոց սիրտը չկոտրելու, հետևաբար անոնց վրայ բարոյական ազդեցութիւն մը ունենալու համար :

◀ Մեք Ռուսի ոչ ներքին սովորութիւնները և ոչ լուսին շրօ բառը զիտենք, բայց և այնպէս, չենք կրնար համոզուիլ որ անդիմայաժական ընթացք մը բռնած ըլլայ Հայոց համար : Ընդհակառակն, իբրև կառավարութիւն առարկելով, կը տեսնենք որ Ալեքսանդր Բ. Կայսրը անտարբեր ցոյց չուուաւ զինքը Հայոց վրայ, երբոր Այլազեան Դարրիէլ Վարդապետը Փարիզէն Ռուսաստան հասաւ ու Կայսեր ներկայացաւ : (Այս Վարդապետին բարի յատկութիւնները բացսրճակ'ս պէ՛ կը նանք զրել, որովհետև ոչ ինքը Կաթողիկոս պիտի ըլլայ և ոչ ալ Հայը պիտի արժանանայ այնպիսի անձի) : Կայսրը լւա զիտեց և իմացաւ, որ բանիբուն, լիզուագէտ և տաղանդաւոր Հայ վարդապետ մըն է այն և խիստ կարեւոր անձ մը. իսկոյն ձեռք դրաւ անոր վրայ, և յանձնեց անոր Պեսարա պիոյ և Նախջևանու առաջնորդութիւնը :

Ինչ ընթացք էր այս, Ռուսաց կայսեր կողմանէ և ինչ նշանակութիւն ունէր (Ռուս շինելու համար էր, թող ըսէ Ծիչն. այն ու խօսք է) : Մեզի այնպէս կը Ռուի, որ Կայսրը մեծ կարևորութիւն տուաւ, յայսմ մասին, Հայոց կացութիւնը բարոքելու, և Հայոցմէ րիւր անզամ աւելի Թափանցուն աչօք ճանաչեց Հայոց համար ամենակարեւոր անձը, ուստի և յանձնեց անոր բարոյական մարդ հասցնելու գործարաններ և դրաւ այդ ընտիր անձի վարչութեանը տակ :

Այսպիսի բազմաթիւ օրինակներ պակաս չեն, որ 1828 էն ի վեր ակներև կեցած են առաջնիս : Բայց սա չը հաւնած կա-

ռավարութիւննիդ և չը մարսած վարդապետնիդ ինչ գեշութիւն ըրին մեզի , հողինիդ սիրէք .

Դաբրիէլ Վ. Այժմագեանը դպրոց բացաւ թէ չէ .

Տպարան հաստատեց թէ չէ .

Դրբեր հրատարակեց թէ չէ .

Մինչև ցարդ կը հրատարակէ թէ չէ .

Եթէ ասոնք և ասոնց նմանները թշնամութիւն կը համարուին Ռուսաց կայսեր կողմանէ . մյաօրունէ պէտք է մեզ ուրեմն հրաժարական տալ և Սինէացւոց հետ տեսութիւն ընելու սկսիլ . որովհետեւ Հայոց հետ զլուխ ճամեցնելու համար աշխարհը եկած չենք :

Մեք դեռ չկրցինք հասկնալ թէ ով են աշխարհիս մէջ աղեկ մարդիկ Հայոց համար և ինչ տեսակ մարդ է Հայոց ուզածը, որ թագաւորէն, Փոխարքայէն, Պրօկուրօրէն, Կաթողիկոսէն, Պատրիարքէն, Եպիսկոպոսէն, Վարդապետէն, Իշխանէն ևայլն էն տարբերի, անոնց պէս չը մտածէ և Հայուն ինչ ուզելը զիտնայ:

Ընդհանուր ժողովոյն Պ. Փաստափանը, իրեն պաշտպանած խնդրոյն առարկաները նապաստակի պէս ծակէ ծակ փախցընել կուզէ . և նորա համար՝ Վեհապետեան Գէորգ Սրբազնը հոգով մարմնով ուսւ է :

Պուռասայի առաջնորդ Գէորգ Սրբազնը Մօսկովսքի:

Պատրիարք Պողոս Սրբազնը ծէր և արդէն հրաժարեալ :

Զալաբեան Սարգիս Սրբազնը, ազգախար զիրք շինող :

Ներսէս, Սրիատակէս և Անդրէաս Սրբազնները Տեղեկազրի դարանին մէջ իր շնորհիւն ընկած և Ռուսաց կառավարութեան կասկածելի եղած են . ով մնաց ուրեմն անդին, Շանշեանցը, բայց նա ևս ի նանիր բամբասուեցաւ ի շնորհն Միլի . . . Բայց օրհնեալ է Աստուած, Մակար Սրբազնը դրած է և լոիկ մնչիկ կը պաշտպանուի Ընդհանուր ժողովոյ Փաստաբանէն : Բաել է, որ Հայերն առանց Կաթողիկոսի չը պիտի մնան և Մակար Սրբազնն անդ կայ . . .

Սրդարև լալու, կոծելու և կարեկցութեան արժանի վիճակ

մըն է մեր վիճակը և կարծես թէ բանադրեալ և անաթեմացեալ Ազգ մըն ենք, որ մեր ամենէն Սրբազան խնդիրն անզամ մրուտած ձեռքերով կը խառնենք, և այնպիսի մեծմտութեամբ կը յուզ'նիք խնդիրներն որ անոնց վրայով զրածնիս չենք կրնար առանց կարմրելու և առանց ծաղլելի երևնալու թարգմանել ուրիշ լեզուի :

Կայ աշխարհիս մէջ այնպիսի անձ մը որ կարողանայ ինք զինք Հայոց հաւնեցնել իր կենդանութեան ատեն : Ներսէս, որ զրեթէ սրբոց կարգն անցած է, միթէ իրեն կենդանութեանը ատեն վշտայի գանգատներու ենթարկուած չէր :

Եւ ասոնց ամենուն պատճառները եթէ զիտնար Ընդհանուր ժողովն, փոխանակ Պալամէնեան այսպիսի անդիբաղաքական ընթացրով յօշելու, արժանաւոր և Ազգին ուսման ու զարգացմանը համար ուխտ ընող կաթողիկոսցուն պատրաստելու կըզբաղէր. և դեռ Ընդհանուր ժողովարանին դռնէն մինչ ի բարձրագոյն Դուռն առաջնորդող քաղաքական ճամբան չը սովորած, Ցեղեկազրի ներնուն ճանաչած անձանց ետին իյնալով՝ Փէթէրապուրի մշտշապատ փողոցները մասն զալու փորձը չէր ընէր. Գիտնալով որ դեռ պալամէնեային զալու առաւել ստիպողական և առաւել կարևոր գործեր ունէր և ունի այժմ : Գիտնալով որ ուժուորին դէմ իրաւունք պաշտպանելու կարգն ու կանոնը ճանաչելով՝ բիւր անգամ աւելի արտօնութիւն կարող է մարդս վայելել բան թէ՛ մեծաբարբառ բողոքներով : Գիտնալով մանաւանդ որ մեր հապատակութեան վիճակին մէջ Ռուսը կարող է միշտ և ուզած ատենին՝ մեր Էջմիածնայ Կաթոցիկոսութիւնը վերցնել, բայց յայտնի է որ այդ ծաղրելի խնդիր մըն է և Ռուսաց կառավարութիւնը ատոր կարօտութիւն չունի մանաւանդ անոր համար որ Հայոց լուսաւորչական մասը, ի շնորհս կղերին, աճուրդի ելած ազգ մըն է. որ աւելցնողին ձեռքը պիտի մնայ :

Ռւստի պէտք չկայ կարծելու և կարծեցնելու ժողովրդեան թէ իր կրօնական անկախութիւնը չնշել կամեցող Տէրութիւնն մի կայ աշխարհիս վրայ, և այն ալ Ռուսաց Տէրութիւնն է :

Բաւական համարելու է, որ մեր Ազգը ամէն Տէրութեանց աչքէն ընկած, իր վիճակին մէջ ատելի էակ մընէ դարձած նաև ուրիշ ազգաց առաջ, ալ ինչ հարկ կար առաւել ևս ատելի ներկայացնելու՝ բան որ էրն մինչև ցարդ:

Ինչ հարկ կար, միջնադարեայ և անընդունելի սկզբունքով մը Ռուսաց Կայսեր իրաւունքը ժխտելու, և ինչ պէտք, նորա օրինաւոր Վերօն արհամարինելու մտօք՝ միայն մէկ կաթողիկոսու ներկայացնելու, երևակայելով թէ այն ահազին Տէրութեան զանակալը, իր քաղաքական օրէնքն առ ոչինչ համարելով պիտի ստիպուի զիջանիլ։ Եւ որու, Հայուն, որ ի շնորհած ներկուն անձանց՝ ինչ դաւանութեան ծառայելը և ինչ օրէնքի հպատակիլը չը զիտեր : Իրաւասութիւն կըսէ և իրաւասիրութիւնը կը մերժէ և չը կրնար բացատրել, որովհետև ինչ ըսելը չը զիտեր :

Չը զիտեր թէ ինչ ըսելէ ազգային և ինչ ըսելէ Պօլսեցի Ընդհանուր ժողով .

Չը զիտեր թէ Ազգային իրաւունքը միմիայն Պօլսեցւնց կը պատկանի թէ զաւառացիներն ալ իրենց իրաւունքներն ունին .

Չը զիտեր թէ կաթողիկոսու անձը առանց օրինաւոր քըննութեան կրնայ ընտրելեաց ցանկին մէջ անցնիլ թէ չէ .

Չը զիտեր թէ բարձրաստիճան Եկեղեցականը միայն պիտի անցնի ընտրելեաց ցանկին մէջ թէ ուրիշներն ալ : Եւ թէ այդ ցանկը պատրաստողները նոյնապէս և ընտրողները լաւ տեղեկութիւն ունին ընտրելի անձանց վրայ :

Եւ վեցապէս չը զիտեր թէ Կաթողիկոսը բոլոր Տաճկաստանի թէ միայն Պօլսեցւոց կողմանէ պիտի ընտրուի :

Ինչ^o վիճակ . և ինչ անդիազգայնութիւն :

Բայց այս ըսելովնես խիստ լաւ զիտենք, որ մուշտակեայ մանրօն մեր վրայ պիտի ձգին, հոգ չէ, և առաւել լաւ է մեզի համար այդ հազուստն ընդունիլ՝ բան Ընդհանուր ժողովոյ և նորա Փաստաբանին ուկրէ և եղեգնեայ Թնդանօմներէն յօդս ցնդող վառօդի հոտերէն ճայթիլ :

Այս կացութեանը մէջ չենք ուզեր մեր Ազգը շողոքորթելով

խափել և կը ցաւինք ըսելու որ շնորհնակալութիւն քուէող Ընդհանուր ժողովն ալ Ազգին պէս իր վիճակը չըզգար, և այս կացութիւնը մեղանչանք չենք կրնար համարիլ իրեն, որովհետեւ իր վիճակի բնութիւնն ալ անսպէս կը պահանջէ, որ ինքը չըզգայ, և հետևաբար մխիթարուի իր վիճակէն։ Այս խընդիրը լաւ բացատրելու համար սրատմուած օրինակ մ'առաջ բերենք։

Հիւանդ անձ մը, երբոր իր տանը մէջ կը դարմանուի, իր բոլորտիրի առողջ անձանց մէջ (Թէ ընտանիր և Թէ բարեկամ) ինքինք առաւել ևս հիւանդ և առաւել ևս Թշուառ կըզդայ և չը կրնար մխիթարուիլ, մինչև որ բոլորտիրի անձանց պէս կատարեալ առողջ չը տեսնէ ինքինք։ Նոյն իսկ հիւանդը երբոր ինքինք հիւանդանոցի մը մէջ կը տեսնէ, ուր բազմաթիւ անձինք, իրեն պէս, պօնկրան զլուխնին՝ իրենց անկողնոյն վրայ կրթնած, որը կը ճըմֆալվայ, որը կը հազայ, որը Թեր կերկլնցնէ բժշկին, որը գեղին գաւաթը կը պարպէ և որ մէկն ալ իր անդամը կերկլնցնէ դանակին տակ, որ կանկուենացած մասը կտրուի. ասոնց ամենը տեսնելով՝ այն հիւանդը իր ցաւը այնչափ չըզգար և կը մխիթարուի, քանզի իրմէ առողջ մարդ չը տեսներ և իր ներհում նանացած անձը կամ Փաստաբանը, խիստ լաւ ես և Հերքիլէսէն աւելի ուժւոր ես ըսելով կ'ապահովցնէ զայն. և չը մտածեր որ այս վիճակը առողջութեան վերածուելու համար յաղացական նկատման և վերցյի կլորիկ հապերում կը կարօտի։

Մեր չենք կարծեր որ այն ներհում անձինք կարող ըլլան Ազգը սահմեցույցած տեղերնէն կանգնեցնելու . և եթէ նորա մեր շշափած և անձամբ փորձած ներհում անձանց կը նմանին, Զէյթինի խնդրոյն ներհումներէն ամեննին տարբերութիւն չունին, որոց բաջութեանն իսկ ականատես է Դիտողութեան հեղինակն, և ինանիր կըսպասէ մինչև ցարդ որ իրենց մտած ծալէն դուրս ենին ու բարեհաճին զալ և պարպէլ տուած քսակնին լեցնել։ Վասն զի աշխատութիւն պահանջել Ազգին համար՝ իրաւունք է. իսկ սա և նա ըրէ ըսելով ծախսը խոս-

տանալ և ի վերջոյ փախուստ տնալ, ատի խարէութիւն և անզութ յափշտակութիւն է :

Ահա ասոնք են Հայոց ներհուն և ընտիր մասը բաղկացնող անձինք, զորս անշուշտ օր մը պիտի ամաչեցնենք :

Մեր մեր Ազգը մասնաւոր անձանց վրայ պատուաստել չենք ուզեր և մեր նպատակն ուրիշ բան չէ, բայց միայն զզուշացնել Ընդհանուր ժողովն որ ամէն ներհուն անձանց ըստածին մէկէն ի մէկ ըլ յարի, և մասնաւանդ իրեն ընտրած Փաստաբանին վայելուչ և հարկ եղած պատուէրը ըլ զլանայ, որպէս զի անհատի մը խօսելու իրաւունքը անսահման ենթադրութեանց ներքև չիյնայ : Եւ իրեն վերաբերեալ գործին զալով՝ եթէ կրնայ, ինքնին փորձէ ամէն խնդիր, որ իրեն կը պատկանի :

Այս է մեր անհատական և վերջին պատասխանը այս խընդրոյն համար, և որովհետև մեր սրբազն պարտքը կատարեցինք, այսուհետև մեր վրայ յանիրաւի արձակողին ուրիշ պատասխան չունինք՝ բայց միայն արհամարհնանք :

Իսկ եթէ ըստածին ծանր թուի Ընդհանուր ժողովոյն, Թողութիւն խնդրելով՝ մեր ըստածներն իրեւ յետին Հայու տրտունչ կը համարիմք, և կը փափաքիմք ի բոլոր սրտէ, որ մեր տեսութեան մէջ չարաչար սխալած ըլլամք, ու Տեղեկագիրն ալ յարգուի, փառաւորուի և այս խօսքն ալ իրեն համար եղած չըլլայ. Թէ՝

Խնդրէք և ոչ առնուք, վասնզի չարաչար խնդրէք :

Կայ Առաքութեան 11 Յուլիս 1866.



Դառնալու
Հայութիւն

2077

2073

